

## Բանկերի գործարար շրջանառության սովորույթ



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարը որոշում կայացնելիս հաշվի է առնում ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջները, այլև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները:

Հայաստանի ֆինանսավարկային կազմակերպությունների խորհրդատվական կենտրոնի կողմից Հաշտարարին ուղղվել են մի շարք հարցեր, որոնց մի մասին պատասխանելու համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում գործարար շրջանառության սովորույթը կիրառելու նպատակով Հաշտարարը նպատակահարմար է գտել բանկերից ճշտել տվյալ հարցի վերաբերյալ համակարգում գործող գործարար շրջանառության սովորույթը: Մասնավորապես, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 249-ի 2-րդ մասով սահմանվում է, որ գրավառուն, գրավատուի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցել գրավատուին՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին: Ըստ Հայաստանի ֆինանսավարկային կազմակերպությունների խորհրդատվական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից ներկայացված տեղեկությունների՝ գրավառուի կողմից գրավատուին առձեռն կամ փոստով պատշաճ ծանուցելը մի շարք դեպքերում դառնում է անհնար, մասնավորապես՝ երբ գրավատուն ծանուցումն ուղարկելու ժամանակահատվածում բացակայում է քաղաքից: Ըստ Կենտրոնի՝ խնդիր է առաջանում նաև այն դեպքում, երբ փոստի աշխատակիցը գրավատուի բացակայության դեպքում նամակը հանձնում է տվյալ հասցեում գտնվող որևէ անձի կամ հարևանին, որը ստորագրում է ծանուցման վերաբերյալ կտրոնը, ինչը ամենևին չի նշանակում, որ ծանուցումը ստացել է գրավատուն: Բացի այդ, Կենտրոնի կարծիքով այս պարագայում առաջանում է մեկ այլ խնդիր, այն է՝ գրավատուն իր հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է այլ անձի, իսկ համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի՝ այն կարող է հանդիսանալ որպես հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում և որոշակի իրավական հետևանքներ առաջացնել գրավառու ֆինանսական կազմակերպության համար: Կենտրոնը նշում է նաև, որ

գրավառուի համար գրավատուին ծանուցելը դառնում է անհնար նաև այն դեպքերում, երբ գրավատուն հրաժարվում է ծանուցումն ստանալուց, կամ երբ գրավատուն օտարերկրյա քաղաքացի է և Հայաստանում չունի մշտական բնակության վայր: ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, նախատեսելով բռնագանձման ծանուցման մասին դրույթ, ոչ մի կերպ չի մանրամասնեցնում այն:

Անդրադառնալով այս խնդրին՝ առաջին հերթին պետք է նշել, որ ծանուցում հանձնելու ընթացակարգը ինչ-որ չափով կարգավորում է ստացել ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, այն էլ՝ միայն համապատասխանաբար դատական ծանուցագրերի կամ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու մասով: Սակայն միննույն ժամանակ ՀՀ Քաղ. դատ. օրենսգիրքը չի կարգավորում ծանուցագրի հանձնման մանրամասները, այդ թվում՝ ծանուցագիրն ընդունելուց հրաժարվելու հետևանքները: Պետք է նշել, որ նախկին՝ 1964թ. քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մանրամասնորեն կարգավորում էր ծանուցագրի հանձնման կարգն ու այն ընդունելուց հրաժարվելու հետևանքները: Ըստ սահմանված կանոնների՝ ծանուցագիրը քաղաքացուն հանձնվում էր անձամբ, ով ստորագրում էր վերադարձման ենթակա ծանուցագրի երկրորդ օրինակի վրա, իսկ ձեռնարկություններին կամ կազմակերպություններին հասցեագրված ծանուցագիրը հանձնվում էր համապատասխան պաշտոնատար անձին, որը ստորագրում էր ծանուցագրի երկրորդ օրինակի վրա: Եթե ծանուցագիր բերողը ծանուցվող քաղաքացուն չէր գտնում նրա բնակության կամ աշխատանքի վայրում, ապա ծանուցագիրը հանձնվում էր նրա հետ համատեղ ապրող ընտանիքի չափահաս անդամներից մեկին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ նրա աշխատանքի վայրի վարչությանը: Այս դեպքերում ծանուցագիրն ընդունող անձը պարտավոր էր ծանուցագրի երկրորդ օրինակի վրա ցույց տալ իր ազգանունը, անունը, հասցեատիրոջ հետ ունեցած իր ազգակցական հարաբերությունները կամ քաղաքացու աշխատանքի վայրում ծանուցագիր հանձնելու դեպքում՝ իր զբաղեցրած պաշտոնը և առաջին իսկ հնարավորության դեպքում պարտավոր էր այն հանձնել հասցեատիրոջը: Հասցեատիրոջ բացակայության դեպքում ծանուցագիրը բերող անձնավորությունը ծանուցագրի երկրորդ օրինակի վրա նշում էր, թե ուր է մեկնել հասցեատերը և երբ է սպասվում նրա վերադարձը: Այդ տեղեկությունները պետք է հաստատվեին և

վավերացվեին տեղական ինքնակառավարման մարմինների կամ հասցեատիրոջ աշխատանքի վայրի վարչության կողմից: Բացի այդ, ծանուցագրի ստացումից հասցեատիրոջ հրաժարվելը հավասարեցվում էր այն հանձնված լինելուն, և ծանուցագիրն ընդունելուց հրաժարվելու մասին նշում էր արվում ծանուցագրի վրա, ընդ որում՝ այդ նշումը վավերացվում էր վերոնշյալ կարգով:

Ներկայումս, ինչպես նշվեց վերը, այս հարցը օրենսդրորեն չի կարգավորում, ուստի գործող գործարար շրջանառության սովորույթը բացահայտելու նպատակով՝ Հաշտարարը խնդրել է ներկայացնել ՀՀ-ում գործող բանկերի կարծիքը այս հարցի վերաբերյալ, ինչպես նաև առկայության դեպքում նկարագրել բանկում գործող ներքին կարգը: Հարցի կապակցությամբ բոլոր բանկերի կողմից տրված բացատրություններն ու պարզաբանումները, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող իրավաբանների հետ քննարկումները հանգել են հետևյալին.

ա) գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցել նշանակում է. ծանուցման առաջին օրինակը գրավոր ձևով հանձնել գրավատուին, իսկ երկրորդ օրինակում նշել գրավատուի կողմից ծանուցումը ստանալու մասին, կամ ծանուցումը պատվիրված, հետադարձ ծանուցմամբ նամակով փոստով ուղարկել գրավատուին, որտեղ ստացողը ստորագրում է ծանուցումը ստանալու մասին:

բ) Գրեթե բոլոր բանկերը նշել են, որ առանց դատարան դիմելու գույքի վրա բռնագանձում տարածելու մասին ծանուցում տալու ընթացակարգը կարգավորվում է բանկի և հաճախորդի միջև կնքվող գրավի պայմանագրում, որտեղ ընդհանուր առմամբ նշվում է, որ կողմերը միմյանց ուղարկված ծանուցումները համարում են պատշաճ ձևով ուղարկված, եթե այն գրավատուն առձեռն ստացել է առձեռն բանկից կամ այն գրավատուին հանձնվել է առձեռն ցրիչի միջոցով, կամ այն ուղարկվել է պատվիրված փոստային նամակով՝ գրավի պայմանագրով գրավատուի նշած հասցեով՝ անկախ այն գրավատուի կողմից ստանալու հանգամանքից (վերջին միտքն ամրագրված է միայն մի քանի բանկի կողմից ներկայացված գրությունում): Սակայն միևնույն ժամանակ, պետք է նշել, որ անկախ ծանուցագիրը գրավատուի կողմից ստանալու հանգամանքից՝ այն չի կարող պատշաճ ծանուցված համարվել, քանի որ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ փոստային առաքում է համարվում փոստային առաքանու ընդունումը, մշակումը, փոխադրումը և հանձնումը հասցեատիրոջին, իսկ հասցեատեր է այն

Ֆիզիկական անձը կամ կազմակերպությունը, որին հասցեագրված են փոստային առաքանի, դրամական միջոցների փոստային փոխադրություններ, հեռագրային կամ այլ հաղորդագրություններ: Իսկ նույն օրենքի հոդված 5-րդի 2-րդ մասը սահմանում է, որ հասցեատերն իրավունք ունի հրաժարվել իր հասցեով ստացված փոստային առաքանիներից կամ փոստային փոխադրություններից: Փաստորեն, յուրաքանչյուր դեպքում, երբ գրավատուն հրաժարվի իրեն հասցեագրված նամակն ընդունելուց, ապա նա չի կարող պատշաճ ձևով ծանուցված լինել՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածի իմաստով: Բանկերը նշել են նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հարցի վերաբերյալ բացակայում է օրենսդրական մանրամասն կարգավորումը, նրանք աշխատում են բոլոր դեպքերում գրավ դրված գույքի նկատմամբ բռնագանձում տարածել դատական կարգով՝ խուսափելու համար հետագա բարդություններից:

գ) Որպես հարցի լուծման այլընտրանքային տարբերակ՝ բանկերի մի մասն առաջարկել են հաճախորդին հրավիրել բանկ կամ վարկային կազմակերպություն, նրան տալ գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու մասին բռնագանձման ծանուցումը, որի պատճենի վրա հաճախորդը մակագրություն կանի այն ստանալու վերաբերյալ, որը և կպահվի կազմակերպությունում: Բանկերի մի մասն էլ առաջարկել է հաճախորդին նախապես ծանուցագիր ստորագրել տալ վարկային կամ գրավի պայմանագիրը կնքելու օրը, որպեսզի հաճախորդի՝ քաղաքից բացակայելու կամ նրան հայտնաբերելը անհնարին լինելու դեպքում բանկն իրավունք ունենա բռնագանձման ծանուցում ուղարկելուց և երկամսյա ժամկետը լրանալուց հետո առանց խոչընդոտների գրավադրված գույքը բռնագանձի և իրացնի այն: Մի քանի բանկ առաջարկել է նաև կիրառել նախկին՝ 1964թ. քաղաքացիական օրենսդրության մեջ ամրագրված դրույթները, կամ դրանք ներդնել գործող քաղաքացիական օրենսգրքում:

դ) Գրեթե բոլոր բանկերը Հաշտարարին առաջարկել են որոշակի քայլեր ձեռնարկել բռնագանձման պատշաճ ծանուցման օրենսդրական կարգավորման համար և հայտնել են իրենց պատրաստակամությունը՝ անհրաժեշտության դեպքում աջակցել գործընթացի կարգավորման հարցում: